ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 154

ք. Երևան 09.12.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Ռաֆ-Օջախ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 12.03.2024թ. կնքված N ՓՆՄԱՊՁԲ-24-20/3-5 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում /Համաձայնագիր N 1, առ. 15.05.2024թ/ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն պետք է մատակարարեր 4 հատ ապրանք Համաձայնագրի կնքումից հետո՝ 2 հատը 120 օրվա և 2 հատը 180 օրվա ընթացքում: 2024 թվականի հոկտեմբերի 28-ին Ընկերության կողմից ապրանքները մատակարարվել են, սակայն չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի պայմաններին:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում) ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. նոյեմբերի 28-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

Հաշվի առնելով, որ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ